

COVID - 19

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԷԿՈՆՈՄԻԿԱՆ ԶԻ ԿԱՆԳՆԵՅՎԻ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԵՆ ՀԵՏԱԶԳՎԻ, ԹԵՏՎ ԱՌԱՆՁԻՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐ ԿԽՍՏԱՅՎԵՆ»

Հոկտեմբերի 15-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը, որտեղ քննարկվեց վերջին ժամանակներում կորոնավիրուսի թվի կտրուկ աճի պայմաններում իրականացվելիք միջոցառումների հարցը:



Ինչպես նիստի ավարտին հայտարարեց վարչապետը, չնայած կրոնավիրուսի տարածման տագնապալի դինամիկայի, երկրի ողջ տարածքով էկոնոմիկայի գործունեության սահմանափակում չի նախատեսվում, թեպետ որոշակի սահմանափակումներ կսահմանվեն Թբիլիսիի, ինչպես նաև Իմերեթի տարածաշրջանի ռեստորանների, ժամանցային այլ օբյեկտների աշխատանքում:

Բժշկական ոլորտի պատրաստակամության կամ մահճակալների պակասի մասին անընդունելի են:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄՅԻՆԹՈՐԱԿ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ՍՎԵՏԻՑԻՈՎԼՈՒԲԱՆ



Հոկտեմբերի 14-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշեց Մցխեթթորան՝ Սվետիցխովորայի տոնը:

տոնն այս տարի, բնական է, տարբերվեց նախորդներից՝ կայանալով համավարակի պայմաններում:

Այդուհանդերձ, պատմական քաղաքն ընդունեց իր

Սվետիցխովելիի (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

2020 թվականի Մցխեթթորայի այցելուներին, իսկ Սվետիցխովորայի տոնը:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱՋԱՆՔ». ԸՆՏՐԱՅԱՄԱՐԸ՝ 41



ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԿԼԻՆԻ ԶԵՐ ԶԱՅՆԸ ՕՐԵՆՍԳԻՐ ՄԱՐՄՆՈՒՄ»

Հոկտեմբերի 13-ին, առաջիկա խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի շրջանակներում, «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցությունը Ախալքալաքիում եւ Նինոծմինդայում ընտրողներին ներկայացրեց Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի ընտրատարածքից մեծամասնական պատգամավորության իր թեկնածու Սամվել Մանուկյանին:

Պատգամավորության թեկնածուին ներկայացնելու համար, Ախալքալաքի էին ժամանել Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, «Վրացական երազանք» կուսակցության գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կախալաձեն, կուսակցության գործադիր քարտուղար, «Վրացական երազանքի» նախընտրական շտաբի պետ Իրակլի Կոբախիձեն, պաշտոնական այլ անձինք: Պատգամավորության թեկնածու-

ին ներկայացնելիս՝ ներկա էին նաև Սամցխե-Ջավախեթիի երկրամասում պետական լիազոր



Բեսիկ Ամիրանաշվիլին, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՂԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՀՐԱԳԱԳԱՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ «ԳՈՐԾԵՅ» ԸՆԳԱՄԵՆԸ ՀԻՆԳ ՐՈՂԵ

Հոկտեմբերի 10-ին, ժամը 12:00-ին, ուժի մեջ մտավ Արցախի եւ Ադրբեջանի շփման գծի երկայնքով մարդասիրական նպատակով կրակի դադարեցման համաձայնագիրը:

Հրադադարի համաձայնությունը ստորագրվեց Մոսկվայում, հոկտեմբերի 9-ին մեկնարկած եւ ավելի քան 11 ժամ տևած քննարկումների արդյունքում եւ արձանագրվել էր Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Ջոհրաբ Մնացականյանի, Սերգեյ Լավրովի եւ Ջեյհուն Բայրամովի համատեղ հայտարարությամբ:

Համաձայնությունը նախատեսում էր 2020թ. հոկտեմբերի 10-ի ժամը 12:00-ից մարդասիրական նպատակներով կրակի դադարեցում, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ վերջինիս չափանիշների համաձայն, ռազմագերիների եւ պահվող այլ անձանց, զոհվածների մարմինների փոխանակում: Ըստ

համաձայնագրի, Հայաստանը եւ Ադրբեջանը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ, կարգավորման հիմնարար սկզբունքների հիման վրա ձեռնամուխ էին լինելու առարկայական բանակցությունների խաղաղ կարգավորմանը շուտափույթ սկսմանը՝ վերահաստատելով երկկողմ բանակցային գործընթացի ձեւաչափի անփոփոխությունը:

Սակայն, անտեսելով համաձայնագիրը, ադրբեջանական ստորաբաժանումները ժամը 12:05-ին գրոհ ձեռնարկեցին «Կարախանբեյլի» կոչվող տեղամասի ուղղությամբ: Արցախի պաշտպանության բանակի ստորաբաժանումները դիմեցին համապատասխան միջոցների՝ կասեցնելու հակառակորդի գրոհը:

ՂԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒՄ ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՐԱԳԱԳԱՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Արցախա-ադրբեջանական հակամարտության գոտում հրադադարի հարցում համաձայնության կապակցությամբ Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը տարածել է հայտարարություն, ըստ որի, Վրաստանը ողջունել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում մարդասիրական նպատակով կրակի դադարեցման համաձայնությունը: Գերատեսչությունը հույս է կայտնել, որ հակամարտության կարգավորման հարցերում կիսաջողվի առաջընթաց գրանցել:

«Վրաստանը ողջունում է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հրադադարի մասին համաձայնագրի ընդունումն ու հույս հայտնում, որ հետագա բանակցությունների ճանապարհով հակամարտության կարգավորման հարցերում կիսաջողվի գրանցել առաջընթաց եւ հաստատել կայուն խաղաղություն, որը կնպաստի ողջ տարածաշրջանի անվտանգության ամրապնդմանն ու բարօրությանը»,- սալում է հայտարարության մեջ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԶՈՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հոկտեմբերի 11-ին Թբիլիսիի Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի հանդիսապետությամբ, կիրակնօրյա Սուրբ եւ Ամնահ պատարագ մատուցեց ավագ քահանա արժանապատիվ Տեր Եղիշե Հարությունյանը:

Հավարտ Սուրբ պատարագի, Հայր Սուրբի նախագահությամբ, բարձրացվեց զորակցության աղոթք՝ ի Արցախ, ընթերցվեց վասն խաղաղության Հայաստան եւ Արցախ մեր հայրենիքի եւ վասն զորակցության հայրենյաց պաշտպանների խաղաղության աղոթքը:

Դիմելով ներկաներին՝ Տեր Կիրակոս վարդապետը կոչեց աղոթքներով զորակցել Մայր հայրենիքին եւ Արցախի պաշտպանության դիրքերում կանգնած հայրենակիցներին, ակտիվ

մասնակցել Վիրահայոց թեմի եկեղեցիներում կազմակերպված հանգանակությանը, քանզի այդ աջակցությունը անհրաժեշտ է ոչ միայն հայրենիքի պաշտպանության, այլև վայրագություններից, ավերածություններից տուժած հայրենիքի վերականգնման համար:

Նշենք, որ առաջօր Վիրահայոց թեմի բոլոր եկեղեցիներում ակտիվ հավաքագրվում է շարունակական հանգանակություն՝ ի զորակցություն Արցախի:

COVID - 19

ԳԻՌԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԷԿՈՆՈՄԻԿԱՆ ԶԻ ԿԱՆՉԵՅՎԻ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԵՆ ՀԵՏԱԶԳՎԻ, ԹԵՆՎ ԱՌԱՆՁԻՆ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐ ԿԻՍՏԱՅՎԵՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վարչապետի խոսքով, աշխարհում գոյություն ունի վարակի կասեցման երկու եղանակ, ամբողջական արգելափակում, երկրի հնարավորինս փակում կամ վարակի հետ հարմարեցում ու դրա կառավարում:

- Վարակի հարմարվելը եւ կառավարումը պահանջում է բարձր պատասխանատվություն՝ կառավարության, պետական եւ մասնավոր կազմակերպությունների, մեր քաղաքացիների կողմից: Բոլորը պետք է գիտակցեն, որ այսօր երկրում կանոնների պահպանումը, պաշտպանիչ դիմակի կրումը, տարրական կարգապահությունը եւ օրենքի կատարումը հայրենասիրությունն է: Դա հայրենասիրությունն է, որը հնարավորություն կտա մեր յուրաքանչյուր քաղաքացուն հնարավորինս արագ պահպանել իր առողջությունն ու վերակառուցել մեր տնտեսությունը: Ցանկացած շահարկում վարակվածների թվի աճի, բժշկական ոլորտի պատրաստակամության կամ մահճակների պակասի մասին անընդունելի են:

Ցանկանում եմ ասել, որ այս ամիսների ընթացքում կառավարությունը եւ առողջապահության նախարարությունը պատրաստվում էին դրան, եւ բոլորը լավ

են հասկանում, որ կլինեք երկրորդ ալիքը, կլինեք վարակվածների թվի աճ: Սակայն կարելու է, որ կառավարենք այս գործընթացը: Այսօր ունենք 919 դեպք, առաջիկա օրերին կգերազանցենք 1000-ը, եւ այդ աճը կշարունակվի, բայց առողջապահական համակարգը կդիմանա այս հարվածին, մեր կողմից արդեն ծրագրված նոր մոտեցումների կիրառմամբ,- հայտարարեց Գիորգի Գախարիան եւ, դիմելով քաղաքացիներին, կոչ արեց դիմակներ կրել նաեւ բաց տարածքներում:

Գիորգի Գախարիայի հայտարարությամբ, առաջիկա օրերին կորոնավիրուսով վարակման ցուցանիշը կգերազանցի 1000-ը:

- Այսօր Վրաստանում գրանցվել է ներկրոյային ցուցանիշ 919 դեպք: Սա լուրջ թիվ է, եւ կարծես առաջիկա օրերին մենք հատելու ենք 1000-ի սահմանը: Բոլորս պետք է հասկանանք, որ աշխարհում ոչ մի կերպ հնարավոր չէ արագ դադարեցնել համավարակը, բացի խիստ սահմանափակումների եւ արգելափակումների կիրառման,- նշեց Գիորգի Գախարիան:

Անդրադառնալով հոկտեմբերի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին վարչապետը հայտարարեց, որ դրանց հետաձգման մասին խոսք

անգամ չի եղել չի կարող:

- Ներկա դրությամբ, ընտրությունները հետաձգելու հիմք չկա, դրա մասին մույնիսկ խոսք չկա: Սա պաշտոնական դիրքորոշում է,- ասաց Վրաստանի վարչապետն ու հավելեց, որ նախընտրական շրջանում ցանկացած հարց օգտագործվում է քաղաքական շահարկումների համար: Միեւնույն ժամանակ, ինչպես նշեց վարչապետը, համավարակը համաշխարհային մարտահրավեր է, որը պետք է միավորի ողջ Վրաստանը:

- Մենք դեմ չենք որեւէ ձեռնարկի, ցավոք, բավականի թունավոր նախընտրական միջավայրում, ցանկացած հարց օգտագործվում է՝ ելնելով քաղաքական շահարկումներից: Մենք դրա ժամանակը չունենք: Մենք երբեք չենք քաշվում խոսել ընդդիմության հետ, հատկապես երկիրը միավորող հարցերի շուրջ: Մենք միշտ պատրաստ ենք ցանկացած լուրջ երկխոսության:

Ինչ վերաբերում է ընտրություններին, ապա կրկնեմ ներկա ընտրությունները հետաձգելու հիմք չկա, դրա մասին մույնիսկ խոսք չկա: Մենք կառավարում ենք այս գործընթացը, չնայած այն հանգամանքին, որ վարակվածների թիվն ավելանում է,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՍՆՈՒՄ Է 40 ՄԻԼԻՈՆԻ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 39,223 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 1 103 733 հազարը: Ապաքինվել է 29 միլիոն 410 218 մարդ:



Արգենտինային հաջորդում են Կոլումբիան, Պերուն, Մեքսիկան եւ Զարավային Աֆրիկան:

Վիրուսով վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում է ԱՄՆ-ը, որտեղ հաստատված է 8 219 088 դեպք կա: Այստեղ մահացածների թիվը 222 754 է: Երկրորդ տեղում Զնդկաստանն է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է 7 372 394-ի, մահացածներինը՝ 112 214-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում Բրազիլիան է, որտեղ վարակվել է 5 170 996, մահացել՝ 152 513 մարդ: Ռուսաստանում կորոնավիրուսով վարակվել է 1 369 313, վարակի հետեւանքով մահացել՝ 23 723 մարդ:

Իսպանիայում վարակվել է 972 958, վարակի հետեւանքով մահացել՝ 33 553 մարդ: Արգենտինայում վարակվել է 949 063, վարակի հետեւանքով մահացել՝ 25 342 մարդ:

Չայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է 61 460-ի, մահացածներինը՝ 1056-ի, ապաքինվածներինը՝ 47 541-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է 43 280 մարդ: Վարակից մահացել է 619, ապաքինվել՝ 39 671 մարդ:

Հոկտեմբերի 16-ի տվյալներով, Վրաստանում վարակվել է 15 327, մահացել՝ 124, ապաքինվել՝ 7 613 մարդ:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՐԵԼԻՑԵ. «ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐ ԶԵՆ ԼԻՆԻ»

Վերջին ժամանակներում կորոնավիրուսով վարակման դեպքերի կտրուկ աճը եւ դրանով պայմանավորված նոր սահմանափակումների հնարավոր ներդրման հեռանկարը տազանապ ու մտահոգություն առաջացրեց հասարակության շրջանում:

Թեեւ, Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամդրելիձեի հայտարարությամբ ամբողջ երկրի տարածքով սահմանափակիչ միջոցառումների հաստատում չի նախատեսվում խոսքը վերաբերում է, այսպես կոչված, կետային սահմանափակումներին:



- Հաճախ հարցնում են ամբողջ երկրում կամ տարբեր մարզերում սահմանափակիչ միջոցներ կիրառելու մասին, այս հարցի շուրջ մի քանի անգամ արտահայտել եմ իմ կարծիքը: Ընդհանրապես, դա զրոքալ քաղաքականություն է, որ, ի տարբերություն գարնան, այժմ հիմնված է ավելի ուժեղ, այսպես կոչված լոգոնոմի վրա, եւ խիստ սահմանափակիչ միջոցառումներ չի ենթադրում: Խոսքը վերաբերում է, այսպես կոչված, կետային սահմանափակումներին: Օրինակ, դպրոցում, երբ ունենք վարակի դեպքեր, դպրոցն ամբողջությամբ չի փակվում, անհրաժեշտության դեպքում կփակվի դասարանը, տեղի կունենա երեխաների ինքնամեկուսացում, եւ որից հետո

12 օրվա ընթացքում նրանք կլինեն վերահսկողության տակ,- ասաց Գամդրելիձե:

Ինչ վերաբերում է մայրաքաղաքին, Ամիրան Գամդրելիձեն նշեց, որ Թբիլիսիում լայնածավալ սահմանափակումներ չեն լինի:

- Նման կետային սահմանափակումները կկիրառվեն ողջ Թբիլիսիում: Ոչ միայն դպրոցներում, այլեւ խոշոր հաստատություններում,- ընդգծեց Ամիրան Գամդրելիձե: Ինչպես նախատեսվում է մասկոթի կրումը, պաշտպանության միակ միջոցը շարունակում է մնալ դիմակը:

- Ես կոչ եմ անում, դիմակ կրել նաեւ բաց տարածքներում,- ասաց Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավարը:

ԷԿԱՏԵՐԻՆԵ ՏԻՎԱՐԱԶԵ. «ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԼԻՆԻԿԱՆԵՐՈՒՄ, ԱՆՀՐԱԾԵՆՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ՄԱՀՃԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՎԵԼԱՅՎԵՆ»



Կորոնավիրուսով վարակման դեպքերի կտրուկ ավելացման կապակցությամբ, Վրաստանի առողջապահության նախարար Էկատերինե Տիվարաձեն, հոկտեմբերի 12-ին՝ միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստի ավարտին, հայտարարեց, որ կորոնավիրուսի կառավարմանը ներգրավված կլինիկաներում այս պահի դրությամբ մոբիլիզացված է 3500 մահճակալ եւ անհրաժեշտության դեպքում կավելացվի եւս 2000-ը:

Նրա խոսքով, այսօրվա դրությամբ, կլինիկաներում գտնվում է 2200

է, դա պաշտպանիչ դիմակի օգտագործումն է: - Հատկանշական է այն բաղադրիչը, որ կրկին մեծ նշանակություն է ձեռք բերում պաշտպանիչ դիմակի ինտենսիվ օգտագործումը, ինչպես նաեւ սոցիալական հեռավորությունը, քանի որ մայրաքաղաքում ունենք դեպքերի աճ, ինչը պահանջում է զգոնություն: Մայրաքաղաքում խորհրդակցություններ ենք անցկացնում՝ որոշելու վարակը կանխարգելելու կոնկրետ միջոցառումները:

Մենք մեծ հույս ունենք, որ մայրաքաղաքի բնակչությունը կօգնի մեզ, որ պաշտպանիչ դիմակների ինտենսիվ ու խիստ օգտագործման պայմաններում, խուսափենք լրացուցիչ սահմանափակումներից,- ասաց Էկատերինե Տիվարաձեն:

կորոնավարակակիր:

- Այս պահի դրությամբ, ունենք 3500 մահճակալ, եւ առողջապահության նախարարությունը շարունակում է ակտիվ աշխատել մահճակալներ մոբիլիզացնելու ուղղությամբ: Անհրաժեշտության դեպքում, կավելացնենք եւս 2000 մահճակալ,- հայտարարեց նախարարը եւ հավելեց, որ պաշտպանիչ դիմակների օգտագործման տեսանկյունից միջոցառումները խստացվում են, քանի որ առաջին եւ կարելու միջոցառումը, որը պահպանվում

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՊԱՅԻՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԱՐԱՆՑՈՒՄ ԶԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ

Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Լաշա Դարսալիան հայտարարություն է տարածել՝ հավաստիացնելով, որ Վրաստանի տարածքով ռազմական բեռների տարանցում չի իրականացվում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կողմերին:

Նրա խոսքով, Լեռնային Ղարաբաղում եսկալացիայի սկսվելուն պես, Վրաստանի կողմից դադարեցվել է ռազմական նշանակության բեռների տեղափոխումը Վրաստանի ցամաքային եւ օդային ճանապարհներով, ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Չայաստանի ուղղությամբ: Վրաստանի ունեցած փաստաթղթերի համաձայն, չվերթերը, որոնք իրականացվում են Վրաստանի օդային տարածքում, միայն մարդասիրական, քաղաքական բնույթի են եւ լիովին համապատասխանում են Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) չափանիշներին:

- Մեկ անգամ եւս ցանկանում ենք հայտարարել, որ Վրաստանի տարածքով ռազմական տարանցիչ չի իրականացվում: Վրաստանի ունեցած փաստաթղթերի համաձայն, չվերթերը, որոնք իրականացվում են Վրաստանի օդային տարածքում, միայն մարդասիրական, քաղաքական բնույթի են եւ լիովին համապատասխանում են Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) չափանիշներին: Վրաստանը կրկին շարունակում է հստակ կատարել իր միջազգային պարտականությունները, մարդասիրական եւ քաղաքացիական, այդ թվում՝ կոմերցիոն բեռների անցկացման առումով:

Նշվածն իրականացվում է միջազգային իրավունքի նորմերին, այդ թվում՝ «ICAO»-ի կանոնակարգերին համապատասխան: Չնայած դրան, լրատվամիջոցներով ակտիվացել են շահարկումները, իբր Վրաստանի տարածքով ռազմական փոխադրումներն իրականացվում են քաղաքացիական չվերթերի միջոցով:

Կոնկրետ փոխադրողի եւ բեռի սեփականատիրոջ պատասխանատվությունն է, լիովին ենթարկվել միջազգային իրավունքի նորմերին եւ չչարաշահել մարդասիրական միջանցքները: Խախտում հայտնաբերելու եւ կայուն ապացույց ունենալու դեպքում, Վրաստանը համարժեք կարծազանքի՝ խախտողներից պահանջելով պատասխան միջազգային իրավունքին համապատասխան, այդ թվում՝ «ICAO»-ի առջեւ,- հայտարարեց Լաշա Դարսալիան:

ԱՐԵՎԻԿԱ ՍԱՆՈՒԿՅԱՆ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄՅԻՆԹՈՐԱԿ


ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՎՐԱՍԱՆԸ ՆՇԵՑ ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ՍՎԵՏԻՑԻՏՈՎԼՈՐԲԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

աթոռանիստ տաճարում տոնական պատարագը մատուցեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը: Պատարագին ներկա էին Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, վարչապետ Գիորգի Գախարիան, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, Վրաստանի գործադիր եւ օրենսդիր

մարմինների, երկրում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, հասարակայնության ներկայացուցիչներ: Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան Վրաստանի քաղաքացիներին Մցխեթա քաղաքից շնորհավորել է Սվետիցխովոբա տոնի առիթով: - Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացու շնորհավորում եմ Սվետիցխովոբա տոնի կապակցությամբ: Սվետիցխովոբան այլևս կրոնական տոն չէ, այն պե-

տական տոն է, որը միավորում է: Այդ միասնությունը, իհարկե, անչափ մեծ նշանակություն ունի այսօր, երբ դժվար կացության մեջ ենք: Վստահ եմ, Վրաստանի քաղաքացիները, բժիշկները, վրաց եկեղեցին, կառավարությունը միասին կհաղթենք եւ այս միասնությամբ կարող ենք հաղթահարել նույնիսկ ամենամեծ թշնամուն, ինչպիսին է վարակը,- հայտարարեց Գիորգի Գախարիան:



ՆԻՆՈ ՔԱՂԱԳԻԾԵՆ՝ ԱՐԴԱՐԱՂԱՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՐ



Վրաստանի արդարադատության գերագույն խորհրդի նախագահ չորս տարի ժամկետով ընտրվել է Գերագույն դատարանի նախագահ Նինո Քաղազիձեն: Նինո Քաղազիձեն ստացել է խորհրդի անդամների 13 ձայն: Նախագահն ընտրվել է արդարադատության գերագույն խորհրդի գործող կազմից: Դիչեցնենք, որ արդարադատության գերագույն խորհրդի նախագահ եւ Գերագույն դատարանի նախագահ Նինո Գվենետաձեն պաշտոնից ազատվել էր 2018 թվականի օգոստոսի 2-ին: Նրա պաշտոնաթողությունից հետո, արդարադատության գերագույն խորհրդի նախագահի պարտականությունները կատարում էր խորհրդի քարտուղար Գիորգի Սիքաուտաձեն:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏՔՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱԿ

Վրաստանի կառավարությունը մշակել է խորհրդարան է ներկայացրել 2021 թվականի պետական բյուջեի նախագիծը:

Տարվա ֆինանսական գլխավոր փաստաթուղթը ներկա դրությամբ քննարկվում է խորհրդարանական խմբակցությունների ձեռնարկով: Այն պատգամավորներին ներկայացրել է Վրաստանի ֆինանսների փոխնախարար Գիորգի Կակաուրիձեն: Ըստ կառավարության մշակած փաստաթղթի, 2021 թվականի պետական բյուջեն նա-

խագծված է հաշվի առնելով 5 տոկոսանոց տնտեսական աճը: Ներկայացված նախագծի համաձայն, բյուջեի ընդհանուր ծախսային մասը 17 միլիարդ 71 միլիոն լարի է, ինչը մոտավորապես 1 միլիարդ 150 միլիոն լարիով ավելին է, քան 2020 թվականի ճշգրտված պլանը: Ամենաշատ ծախս ունեցող գերատեսչությունը Վրաստանի բռնազավթված տարածք-

ներից փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարությունն է, հետեւաբար հիմնական միջոցները կենտրոնացված են այս նախարարությունում: Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարարության համար նախատեսվում է 2 միլիարդ 421 միլիոն լարի: Գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության համար պետությունն նախատեսում է 1 մլրդ 738 լարի:

Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունը 2021 թվականին ծրագրված միջոցառումների ֆինանսավորման համար իր տրամադրության տակ կունենա 356 մլն, պաշտպանության նախարարությունը՝ 900 միլիոն, իսկ ներքին գործերի նախարարությունը՝ 790 միլիոն լարի: Ինչ վերաբերում է ֆինանսների նախարարությանը, ապա գերատեսչության ֆինանսավորումը, այս տարվա օրինակով, կմնա նույնը՝ 156 մլն լարի:

Advertisement for StepCoV.ge featuring a QR code and text about COVID-19 prevention and financial services. The text includes 'ՏԱՐԱՆՑԻԿՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԱՐՎՈՂ ԲԵՌՆԵՐՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԵՌ ԶԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ' and 'ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Ե ԶՐԱՅՏԱԳՐՎԱԾ ԱՊՐԱՆՔ'.

ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆ

«ՖԻՆԿԱ» ԲԱՆԿԸ ՄԻԱՆՈՒՄ Է ԱՐՏՈՆՅԱԼ ԱԳՐՈՎԱՐԿԻ ԾՐԱԳՐԻՆ

Արտոնյալ ագրովարկի ծրագիրն իրականացվում է գյուղատնտեսության զարգացման գործակալության կողմից: Ծրագրի նպատակն է գյուղատնտեսության ոլորտում աշխատող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց տրվի ֆինանսական պակաս սակագնով ռեսուրսներից օգտվելու հնարավորություն:

Վարկը տրվում է երեք ուղղություններով՝ շրջանառու-հիմնական միջոցների եւ մեխանիզմների ենթաբաղադրիչի համար: Շրջանառու միջոցների համար հնարավոր է ստանալ 5-100 հազար լարիի վարկ: Վարկի ժամկետը մինչեւ 36 ամիս է, թեւ ծրագրի շրջանակներում առկա համաֆինանսավորումը ներառում է վեց ամիս, որից հետո սպառողը լրիվությամբ մարում է տոկոսադրույքը: Հիմնական միջոցների դեպքում, «Ֆինկա» բանկում հնարավոր է օգտվել 20-150 հազար լարիի վարկից: Վարկի ժամկետը 60 ամիս է, թեպետ համաֆինանսավորումն վերաբերում է առաջին 48 ամիսներին: Մեխանիզմային ենթաբաղադրիչից օգտվողներին տրվել է 7-150 հազար լարի վարկից օգտվելու հնարավորություն, երբ համաֆինանսավորումից կարելի է օգտվել 48 ամիս:

Մանրամասն տեղեկատվությունը տե՛ս Լինկուն: «Ֆինկա» բանկը միկրոֆինանսավորման ոլորտում զբաղեցնում է առաջատար դիրքեր, բանկից օգտվողների 70 տոկոսը ապրում է գյուղում, որտեղ գործնականում որակյալ ֆինանսական սպասարկման սահմանափակ մոտեցում է: «Ֆինկա» բանկն ակտիվ համագործակցում է մյուս սպասարկողների հետ, որպեսզի բարելավի սպառողների կենսական որակը եւ զարգացման համար համապատասխան արտադրանք ու սպասարկումներ առաջարկի: Արտոնյալ ագրովարկից օգտվելու համար, կարող եք այցելել «Ֆինկա» բանկի սերվիս-կենտրոններ Վրաստա-

Advertisement for FINCA Bank featuring a man in a hat and text: 'ԱՐՏՈՆՅԱԼ ԱԳՐՈՎԱՐԿ ՏԱՐԵՎԱՆ 0-ԻՑ', 'ՄԻԱԶԵՎ 2.45 ՏՈՎՈՍ', 'FINCA Bank'.

նի 32 քաղաքներում, լրացնել է կենտրոնային դիմումը կամ զանգահարել 4949 հեռախոսահամարով:



Թամար Ժվանիա. Ընտրողների կամքը որոշիչ է, և նրանց ընտրությունն օրենք է:

Թամար Ժվանիան Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահն է 2013 թվականից: Նրա ղեկավարությամբ 7 տարվա ընթացքում անցկացվել են մի շարք ընտրություններ, որոնք, դիտորդական առաքելությունների գնահատմամբ, մրցանակային էին և վարչարարական առումով լավ կառավարված: Հիշյալ ժամանակահատվածում ընտրական վարչությունը ստացել է բազմաթիվ միջազգային մրցանակներ:

2020 թվականին ընտրական վարչությունը կանգնել է այլ իրականության եւ մարտահրավերների առջեւ. կորոնավիրուսային համավարակը, ընտրությունների վարչարարության հետ մեկտեղ, օրակարգ է բերել առողջության անվտանգության հարցը:

Ինչպես է Վրաստանի ընտրական վարչակազմը պատրաստվում հաղթահարել հիշյալ մարտահրավերները. ընթերցողներն այդ մասին մանրամասներ կիմանան Թամար Ժվանիայի հետ հարցազրույցից:

2020 թվականի հոկտեմբերի 31-ին կանցկացվեցին Վրաստանի խորհրդարանական ընտրությունները, ո՞րն է հիմնական նորությունն այս ընտրություններում, եւ ինչպե՞ս են ընթանում ընտրությունների նախապատրաստական աշխատանքները:

2020 թվականի հոկտեմբերի 31-ը Վրաստանի համար կարելու օր է: Այդ օրը Վրաստանի քաղաքացիները 4 տարի ժամկետով կընտրեն տասներորդ գումարման խորհրդարան: Նորությունն այն է, որ խորհրդարանի 120 անդամ կընտրվի համամասնական (կուսակցական ցուցակ), իսկ 30 անդամ՝ մեծամասնական (մեծամասնական թեկնածու) ընտրակարգով: Նորույթ է նաեւ այն, որ ոչ ոք իրավունք չունի խոչընդոտել քվեարկելու գնացած ընտրողների տեղաշարժն ընտրական տեղամասի մուտքի մոտ:

Ընտրություններին մասնակցելու իրավունք ունի Վրաստանի այն քաղաքացին, ում 18 տարին լրացել է մինչեւ ընտրությունների օրը: Այստեղ կցանկանայի նշել, որ ընտրողը մասնակցում է քվեարկությանը՝ ըստ գրանցման վայրի:

Ավելիայտ է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այս ընտրությունները նույնպես շատ պատրաստ է դիմավորում: Մենք դեռ անցյալ տարի ենք սկսել նախապատրաստվել 2020 թվականի ընտրությունների համար: Ընտրությունների օրը հայտարարվելուն պես, մեզ՝ ընտրական վարչակազմի համար, գործնականում սկսվեց 24-ժամյա աշխատանքային ռեժիմ, սկսվեց երկրի համար կարելուրագույն գործընթաց, որի համար մենք անչափ մեծ պատասխանատվություն ունենք, եւ որը պահանջում է բարձր պատասխանատվություն ներգրավված բոլոր կողմերից:

Մենք կատարել ենք բազմաթիվ կարելուր աշխատանքներ: Ուշագրավ են կիբերանվտանգության ամրապնդման նախապատրաստությունները, ինչը նկատի ունի ընտրողների տվյալների, ԿԸՀ-ում պահվող ցանկացած անձնական տեղեկատվության, եւ այդ թվում, իհարկե, ընտրությունների ժամանակ կիբերանվտանգությունը: 2020 թվականի ընտրություններին Վրաստանի ընտրական վարչությունը կլինի այս ուղղությամբ ամենապատրաստված հաստատություններից մեկը, այս ուղղությունն ամրապնդելու համար մեզ օգնում են Ամերիկայի ժողովուրդը, Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալությունը (USAID), Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը (IFES):

Այս տարի մենք խորհրդարանի ընտրություններ ենք անցկացնում կորոնավիրուսային համավարակի ֆոնի վրա: Ինչպե՞ս են ընտրություններն անցկացվելու համավարակի պայմաններում:

Համավարակն ու ներկայիս համավարակաբանական իրավիճակը՝ սա է հիմնական մարտահրավերը, որի առջեւ այս ընտրություններին կանգնած է ընտրական վարչակազմը: Մենք ուսումնասիրել ենք միջազգային փորձը եւ տեսել, որ ավելի քան 70 երկիր, ներառյալ՝ բարձր զարգացած երկրները, հետաձգել են ընտրությունները, թեւ կան երկրներ (մոտ 60 երկիր), որոնք համավարակի ժամանակահատվածում չեն հետաձգել ընտրությունները կամ հետաձգված ընտրություններն ավելի ուշ՝ համավարակի ժամանակահատվածում սանիտարահիգիենիկ նորմերի պահպանմամբ են անցկացրել:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար գերխնդիր է ընտրողների եւ ընտրական գործընթացի մյուս մասնակիցների առողջությունը: Որպեսզի ընտրողները քվեարկության օրն իրենց ընտրությունը կարողանան կատարել ազատ եւ առողջության համար անվտանգ միջավայրում, ԿԸՀ-ն, խորհրդակցելով ընտրություններին ներգրավված կողմերի հետ, մշակել է եւ որոշում ընդունել քվեարկության օրվա համավարակաբանական պրոտոկոլ: Փաստաթուղթը սահմանում է այն սանիտարահիգիենիկ կանոնները, որոնք ընտրություններին մասնակցելու ժամանակ պետք է պահպանեն ընտրողները, տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները, իսկ ներգրավված կողմերը՝ իրենց գործունեությունն իրականացնելիս: Հետեւաբար, ընտրությունների գնացած ընտրողներն ընտրական տեղամասերում այս ուղղությամբ եւս նորությունների կհանդիպեն:

Կոնկրետ ի՞նչ կանոններ պետք է պահպանեն ընտրողները: Նրանք կանցնե՞ն, արդյոք, ջերմաստիճան:

Կցանկանայի շեշտել, ընտրողը չի անցնի ջերմաստիճան, բայց պարտավոր է դիմակ կրել: Այն դեպքում, եթե նա չի ունենա դիմակ, ընտրական վարչությունը կապահովի նրան դիմակով: Ընտրողը ընտրատեղամաս գնալիս՝ երկու անգամ, կարճ ժամանակով, ստիպված կլինի հանել իր դիմակը՝ կատարելու նույնականացման եւ օրենքով սահմանված ընթացակարգերը: Եթե ընտրողը չի հանի դիմակը, նրան քվեաթերթիկ չի տրամադրվի:

Բացի այդ, ջերմաչափի ընթացակարգը կանցնեն ընտրատեղամասում երկար ժամանակ գտնվող լիազորված անձինք՝ հանձնաժողովի անդամները, դիտորդները, սուբյեկտի ներկայացուցիչները, լրատվամիջոցների ներկայացուցիչները, որպեսզի քվեարկության օրը առավելագույնս ապահովված լինեն առողջության անվտանգության հարցերը:

Այս առումով պետք է նշել, որ ընտրողները ընտրատեղամասում միայն կարճ ժամանակ են շփվում, ինչը առողջության տեսանկյունից ցածր ռիսկ է պարունակում: Կարելի է ասել, որ ընտրողների ընտրական տեղամաս գնալը, այդ թվում՝ համաճարակային իրավիճակում, նվազագույն վտանգ է պարունակում: Մենք հաշվել ենք եւ գիտենք, որ ընտրողներին ընտրական տեղամասում քվեարկելու համար անհրաժեշտ է 5-10 րոպե: 15 րոպեից պակաս ժամանակով շփումը, ըստ ճանաչված չափորոշիչի, ռիսկային չէ:

Ընտրողը կարո՞ղ է օգտագործել իր սեփական գրիչը:

Իհարկե, նրանք իրավունք ունեն եւ կարող են օգտագործել իրենց սեփական գրիչը, չնայած ընտրությունների վարչակազմը բոլոր ընտրողներին անհատական գրիչներ կառաջարկի: Գրիչները միանգամյա օգտագործման են եւ մատչելի բոլորի համար, գրիչներն ընտրողները կստանան մեկանգամյա օգտագործման համար: Քվեարկելուց հետո, ընտրողը գրիչը պետք է տեղադրի հատուկ տարայի մեջ: